

LE LECTIONNAIRE DE JÉRUSALEM EN ARMÉNIE: Le Čašoc^c. I. Introduction et liste des manuscrits par *Charles Renoux*, directeur de Recherche au C. N. R. S. Ouvrage publié avec le concours de la Fondation Calous e Gulbenkian (F. Graffin Patrologia Orientalis, tome 44— fascicule 4—N 200), Diffusion mondiale: Brepols, Turnhout Belgique, 1989, 137 p.

ՇԱՐԼ ՌԵՆՈՒ, Իրուսաղեմի Սահմաֆր Հայաստանում. Ճաշոց: I Առաջարան և ձեռագրերի ցանկ, Բրեպոլիս/Տյուերնո, 1989, 137 էջ:

Վերջին յոթ տասնամյակների ընթացքում Խորհրդային Հայաստանում աթևիզմի լայն տարածման պայմաններում ամբողջովին մոռացության, բամահրանքի և աղեհ հարձակումների էր ենթարկվում հասարակագիտության մի շարք կարևորագույն ընդհանրությունների (Հայոց եկեղեցու պատմություն, հայրաբանական, ծիսական դրականություն և այլն) ուսումնասիրությունը, որը վերջին տարիներին հսկայական հաջողությունների է հասել Եվրոպայում և անդրծովյան երկրներում: Իրեն քաղաքակիրթ համարող և Երբև թրիստոնություն դավանած յուրաբանչյուր պետություն կամ ժողովուրդ, իմ կարծիքով, պարամպորված պետք է ղղա մասնադետներ պատրաստել և ֆինանսավորել ներշնչված գիտաշնչուրից յուրաբանչյուրը, եկեղեցու պատմության բաղմաթիվ մասնագիտացումների մէջ իր կարևորությունը աշքի է ընկնում այն պիտությունը, որը ծուռություն է թրիստոնական եկեղեցու ծիսակարգի և ավանդված բաղմալեցու, ընդդրերի ուսումնասիրությանը:

Հայկական միջնադարյան ծիսական դրականությունը վաղուց ի վեր դրադեցնում է միջագրային գիտական հասարակությանը, քանի որ այդ ընդհանրություն ուսումնասիրությունը ոչ միայն հնարավորություն է տալիս ի մոտ ծանոթանալու Հայոց եկեղեցու ծիսակարգին, այլ նաև հետադոտողներին թույլ է տալիս վերականգնելու վաղ թրիստոնության դարաշրջանի արեւելյան եկեղեցու և մասնավորապես Երուսաղեմի ծիսական տարվա ողջ համակարգը իրեն հատուկ ընթերցումներով և տոներով: Այդ է պատճառը, որ Հայոց մատենագրության մականդված

մի շարք ծիսական մատյաններ արժանացել են արտասամանում մասնավոր ուսումնասիրության և թարգմանության: Հետադոտողներին և հրապարակումների այդ շարքում վերջին երեք տասնամյակների ընթացքում առանձնում են ֆրանսիացի հայագետ Շարլ Աթանաս Իրնուի ուսումնասիրությունները և հրապարակած լեագրերը:

Շարլ Իրնուի գիտական հետաքրքրությունների կիզակետում է հայ միջնադարյան թարգմանական ծիսական և հայրաբանական դրականությունը, որի հմուտ հրատարակիչը, թարգմանիչն ու հետադոտողն է բաղմավաստակ ֆրանսիացի գիտնականը: Նրա գրչին են պատկանում հետեւյալ մատենագրական հուշարձանների ուսումնասիրությունն ու հրապարակումը:

Ա) Եփրեմ Ասորու (կամ Մծրնացու, IV դար) հայերենով պահպանված 358 թ. կորւանված Նիկոմեդիա քաղաքին նվիրված 16 ողբերի ընդդրի հրատարակությունն ու ուսումնասիրությունը: Պետք է նշել, որ ասորական մատենագրության այս հայտնի հուշարձանի

2 նշենք դրանցից ամենակարևորները:

F. C. Conybeare. Rituale Armenorum being the administration of the Sacraments and the Breviary rites of the Armenian Church. Oxford, 1905; N. Adontz. Les iêtes et les saints de l'Eglise Arménienne.—Revue de l'Orient Chrétien 26 (1927—1928), p. 74—104 225—278. Ք. ՌԲՔՅՈՒՆ. Գրիգորիս Արշարունեոյ մեկնութիւն ընթերցութեոց, Վենետիկ, 1964: L. M. Froidevaux. Grigoris Aršarouni. Commentaire du Lectionnaire, traduction française Introduction et notes. Venise, 1975.

1 Շարլ Իրնու. «Ճաշոց» գրքի ծագումնադարգոցութիւն.—«Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 2, էջ 30—32:

ասորերեն բնագրից պահպանվել է միայն մի քանի հատված՝

Բ) Իրենիոս Լիոնցու (կամ Լոկոզմացի, II դար) «Ընդդէմ Հերձուածողաց» և «Յոյցք առաքելական քարոզութեան» երկերի հայերեն թարգմանությամբ պահպանված հատվածների լիակատար նորագույն հրատարակությունը, զուգահեռ լատիներեն թարգմանությամբ:

Գ) Իսիդորոս Երուսաղեմացու (V դար) «Հորայ մեկնութիւն» աշխատության հայերեն թարգմանությամբ պահպանված բնագրի նորագույն համեմատական հրատարակությունը ուսումնասիրությամբ և ֆրանսերեն թարգմանությամբ:

Դ) Առաքելական նամակների մեկնողական շարքերը, որոնցից հրապարակվել է միայն երկու առաքյալների՝ Հակոբի և Պետրոսի թղթերի մեկնությունները:

Ե) Միայն հայերեն բնագրով պահպանված

3 Ephrem de Nisibe. Mémre sur Nicomédie, Edition des fragments de l'original Syriaque et de la version Arménienne. Traduction Française introduction et notes par Charles Renoux (F. Graffin. Patrologia Orientalis, T. XXXVII.—Fasc. 2 et 3—N 172—173), Brepols. 1975.

4 Ինչպես հայտնի է այս հատվածների մի նշանակալի մասի առաջին հայտնաբերողներն են Կարապետ Տեր-Մկրտչյանն ու Երվանդ Տեր-Մինասյանը, տե՛ս Irénée de Lyon Nouveaux fragments Arméniens de l'Adversus Haereses et de l'Epideixis/Introduction, traduction latine et notes par Charles Renoux (F. Graffin. Patrologia Orientalis, T. XXXIX—f. 1—N 178), Brepols 1978. Այս աշխատության մասին Լ. Տեր-Պետրոսյանի գրախոսությունը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 300—301:

5 Հրատարակությունը պատրաստվել է Շարլ Մերսիերի աշխատակցությամբ. Hésychius de Jérusalem. Homélies sur Job, version Arménienne, Éd. orig. introduction et notes par Charles Renoux. Traduction par Charles Mercier et Charles Renoux (F. Graffin. PO, T. 4—t. 1 et 2—N 190 et 191), Brepols, 1983.

6 La chain Arménienne sur les Epîtres Catholiques: I. La chaîne sur l'Épître de Jacques/par Charles Renoux, PO, T. 43/1 (1985); La chaîne Arménienne sur les Epîtres Catholiques: II. La chaîne sur les 'Épître de Pierre/par Charles Renoux, PO T. 44/2 (1987).

երուսաղեմյան հնագույն Սահմանքի մեկ մատենագրության մեջ այն ստացել է ճաշոց անվանումը) ուսումնասիրությունը, հրատարակությունն ու ֆրանսերեն թարգմանությունը: Այս երկհատորյակում հետազոտված մատենագրական հուշարձանի արմատները հասնում են քրիստոնեական ծեսի հնագույն մայրաքաղաք Երուսաղեմի արարողակարգին: Ե. Ռենուս շուրջ երեսուն տարի զբաղվում է քրիստոնեական ծիսական գրականության այս կարևորագույն հուշարձանի պատմական, աղբյուրագիտական և ձևագրագիտական ուսումնասիրությամբ: Նշված ուսումնասիրություններում վաստակաշատ ֆրանսիացի հայագետը կարողացել է հասնել իր առջև դրված հետևյալ խնդիրների պարզաբանմանը.

ա) վերականգնել երուսաղեմյան հնագույն Սահմանքի հայերեն բնագիրը՝ հիմնվելով այն ներկայացնող երեք հնագույն ձևագրերի (Փարիզի Ազգային գրադարանի N 44, Երուսաղեմի ս. Հակոբյանց մատենադարանի N 121 և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի N 985) ընձեռած բնագրագիտական և աղբյուրագիտական ձշտումների և տարրերը բնութագրելով:

բ) ձշտել բոլոր հնագույն սկզբնաղբյուրները, որոնք հնարավորություն են տալիս վերականգնել V դարի առաջին կեսի երուսաղեմյան Սահմանքը (հիմնականում նկատի ունի. Եզերի ուխտավորուհու «ճանապարհորդությունը», հայ-թաթարական ծախսերը, վրացական Սահմանքը, լուրդանդական եկեղեցում ոգտագործված «Անաստասյան Սահմանքը»)՝ և հիմնվելով դրանց հաղորդած վկայությունների վրա հնարավորության սահմաններում ձշտել այդ ծիսական Գրքի արարողակարգը և ծրագիրը: V դարի վերջին և V դարի սկզբին:

գ) ձշտել վերահիշյալ երեք հայերեն ձևագրերով հասած երուսաղեմյան Սահմանքում ու հետագայի մյուս սկզբնաղբյուրներում հիշատակված սրբավայրերի կառուցման մամանակը և այնտեղ կատարվող արարողությունների երուսաղեմյան Սամանք մտնելու մամանակը:

7 Le codex Arménien Ierusalem 121: I. Introduction aux origines de la liturgie Hiérosolymitaine lumières nouvelles/par Athanase Renoux, PO, T. XXXV/1 (1969); Le codex Arménien Jérusalem 121: II, Edition comparée du texte et de deux autres manuscrits/Introduction, textes, traduction et notes par Athanase Renoux. PO, T. XXXVI/2 (1971).

8 Տե՛ս PO, T. XXXVI, 2, p. 210—373.

9 Տե՛ս PO, T. XXXV/1, p. 19—28.

(Մեկաստացի 40 վկաներ և Սուրբ Ստեփանոսի վկայարան, սուրբ Թովմասի և այլ սրբերի տոնակատարությունը՝ Վոստոկի 23-ին Բեթփագեում, սուրբ Հինգշաբթին՝ Դատավորների պալատի և Կեփայի պալատի սրբատեղիները, Ավագ շաբաթվա սրբատեղիները և պահքի օրացույցը)¹⁰։

դ) Ըշտվում է Վ՝ դարի սկզբի երուսաղեմյան արարողակարգում արտոգոյված ծիսական տարին և ցույց է տրվում դրա հետագա զարգացումը հայերեն թարգմանված երուսաղեմյան Սահմանում, Հեղինակն անդրադառնում է օգտագործված սաղմոսներին և շարականներին, առանձին խորագրերին և տոնակատարություններին, Պահքի նախօրյակի ճրագայությունն¹¹։

և) Ֆրանսիացի հայագետը հետևում է ծիսական ընթերցումների կարգի փոփոխություններին (ղեկավարների 29-ի ընթերցումներ, քրիստոնեականական ժԱ ընթերցում, Արմավելյաց կիրակիի ավետարանական ընթերցում, սուրբ երկուշաբթու երկու ընթերցում, սուրբ երեքշաբթու ավետարանական ընթերցում, սուրբ չորեքշաբթու ավետարանական ընթերցում, սուրբ հինգշաբթու օրվա ընթերցվելիք ավետարաններ, սուրբ հինգշաբթու գիշերվա ավետարաններ, սուրբ ուրբաթի ընթերցումներ, Հարության ավետարաններ, երկու ձևագրերի՝ Փարիզ 44 և երուսաղեմ 121 ընթերցումների համակարգը)¹²։

դ) Անխատանքի ընթացքում ճշտվում է երուսաղեմյան Սահմանքի հայերեն թարգմանության ժամանակի հարցը՝ Հեղինակն այս մատյանի թարգմանության հնարավոր թվական է համարում 417 և 439 թթ. ժամանակամիջոցը¹³։

Ռուր այս հարցերի և չհիշատակված խնդիրների քննությունը կատարված է հայագետ րեադրագետի, աղբյուրագետի, ընդհանուր քրիստոնեական և հայկական եկեղեցու ծիսակարգը ուսումնասիրող գիտնականի լրջությամբ և ուսանելի վարպետությամբ¹⁴։ Այս նույն ոգին է տիրում նաև դրախոսվող աշխատության մեջ, որը վերոհիշյալ երկու գրքերի տրամաբանական

շարունակությունն է։ Ներկա ուսումնասիրությունը հայերեն թարգմանությամբ պահպանված երուսաղեմյան Սահմանքի և Ճաշոցի ձևագրական և մատենագրական նյութերի հետազոտության ամփոփումն է։

Շարլ Ռենուի նոր աշխատությունը սկսվում է նախաբանով, համառոտագրությունների ցանկով, մատենագիտությամբ և առաջաբանով¹⁵։ Նախաբանում հեղինակը նշում է, որ երուսաղեմյան Սահմանքի հայկական տարբերակի՝ Ճաշոցի ուսումնասիրությունը, որի մասին առաջին ուսումնասիրությունն ինքը հրապարակել է 1969 թ., ավարտվում է եռագրության ներկա հատորով, որ ուսումնասիրության նյութ է դարձել այդ ժողովածուի հայտնի հայերեն ձևագրերի հետազոտությունը՝ Հեղինակը շնորհակալություն է հայտնում Գալուստ Գյուլբենկյան հաստատության վարչությանը՝ գրքի հրատարակության ծախսերը ամբողջությամբ հոգալու համար, Համառոտ շարադրանքով ֆրանսիացի հայագետը բացատրում է Ճաշոց մատենագրական երկի էությունը, վկայություններ է լրբում միջնադարյան հայկական մատենագրական հուշարձաններից, որ այդ գիրքը տարբեր դարերի ընթացքում անվանվել է «Ընթերցում», «Ընթերցումաձք», «Ընթերցումադիրն», «Ճաշոց» և «Տանաճան»։

Քուն աշխատությունը բաղկացած է երեք գլխից, վերջաբանից և ցանկերից։ Առաջին գլխի¹⁶ նվիրված է Վ—XII դդ. հայ մատենագրության այն հուշարձանների վկայությունների քննարկմանը, որոնք իրենց բովանդակությամբ առնչվում են երուսաղեմյան Սահմանքին կամ տեղեկացնում են այդ երկի մեջ հայկական միջավայրում կատարված որոշակի փոփոխությունների, նոր տոների և ընթերցվածների մուծումների մասին։ Գիտնականը քալլ առ քալլ քննելով V—XII դդ. հայ մատենագրության վկայությունները, ճշգրտում է, թե երբ են Հայոց եկեղեցական տարվա մեջ ներմուծվել մի շարք սրբերի տոնակատարությունները, երբ են իրարից հեռացվել դեռևս երուսաղեմյան Սահմանքից հայտնի, հունվարի 6-ին տոնվող Հայտնության, Մկրտության, Մենդյան արարողությունները, երբ է Տոնացույց և Ճաշոց մուծվել Առաջավորաց պահքը, Վարդավառի տոնը և բազմաթիվ այլ՝ Հայոց եկեղեցական տարվա և Ճաշոցի բաղկացուցիչ մասերը կազմող արարողություններ, ընթերցվածներ և տոնակատարություններ։ Այս գլխում կատարված մանրակրկիտ աղբյուրագիտական

10 ՏԼ՝ս նույն տեղում, էջ 34—55։

11 ՏԼ՝ս նույն տեղում, էջ 103—100։

12 ՏԼ՝ս նույն տեղում, էջ 168—168։

13 ՏԼ՝ս նույն տեղում, էջ 169—181։

14 Վերոհիշյալ խնդիրներից շատերի և Ճաշոցի հետագա փոփոխությունների համառոտ ընթերցողի տե՛ս նաև Շարլ Ռենու. «Ճաշոց» գրքի ծագումն ու զարգացումը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 2, էջ 28—45։

15 PO, t. 44, f. 4, N 200, p. 419—426.

16 նույն տեղում, էջ 427—462։

քննության մեջ դժվար է գտնել հեղինակի կողմից բաց թողնված որևէ բացակայություն, սակայն միայն ցավով պետք է նշել, որ հեղինակը խուսափել է օգտագործել Մովսես Խորենացու, Նղիշտի և Սեբեոսի պատմական երկասիրությունների վկայությունները, որոնց հեղինակների ժամանակի խնդիրը ֆրանսիացի գիտնականը (հետևելով մի շարք հայագետների ուսումնասիրությունների արդյունքներին) լուծված չի համարում: Այս տեսակետին մեզ շահագրգիռ հետաքրքիր են թվում Քրիստոսին նվիրված տոների համար Նղիշտի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի տեղեկությունները¹⁷, իսկ բուն հայկական սրբերին նվիրված տոների և արարողությունների մուծման ժամանակի որոշման համար՝ Մովսես Խորենացու և Սեբեոսի պատմական երկասիրությունների վկայությունները:

Մենագրության երկրորդ գլխում¹⁸ հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է մեզ հասած ճաշոցների ընդօրինակությունների տարբեր խմբերին: Գլխի սկզբում Շարլ Ռենուս հետազոտության է ենթարկում Լուսաղբմյան Սահմանքի և Նրանից ծագող ճաշոցների տարբեր խմբերի ամենաէական ձևափոխությունները, դասակարգում է ձևագրական բոլոր խմբերը, մանրամասնորեն քննարկում է յուրաքանչյուր խմբի առանձնատկություններն ու բացահայտում ամեն մեկի ծրագրային յուրահատկությունը: Այնուհետև, հիշատակված գլխում մանրամասնորեն քննարկում է հայկական միջավայրում գործավարած և մի շարք ձևագրական խմբերով հայտնի բյուզանդական ծագում ունեցող ճաշոց-տոնացույցների (Պենտեկոստաբիոն) առանձնատկությունները և հայկական միջավայրում ճաշոցների այդ տիպի կրած ծրագրային ձևափոխությունները: Գլխի վերջում ֆրանսիացի հայագետը անդրադառնում է Հռոմի պապական կաթոլիկ եկեղեցու արարողակարգը ներկայացնող կամ դրա ազդեցությանը ենթարկված ճաշոցներին և թվարկում այդ խմբին պատկանող ձևագրերը:

Աշխատության երրորդ գլուխը¹⁹ նվիրված է ճաշոցի ձևագրերին: Հեղինակը ճշտում է այդ մատյանի հնագույն ընդօրինակությունների

նախօրինակի դրձեու հնարավոր ժամանակաշրջանը: Առանձնապես է ճաշոցների տարբեր խմբերը, ապա՝ ռուս Շտեյնլու վայրի թվարկում է իրեն ծանոթ բոլոր ճաշոց մատյանները, որոնց մեջ հաւած ընդօրինակությունների թիվը ըստ Շարլ Ռենուի հետազոտության հասնում է 344-ի: Այնուհետև հայագետը բերում է ճաշոցների ժամանակագրական ջանկը: Այս գլխի պարունակած փաստագրական հսկայական նյութը վկայում է, որ Շարլ Ռենուս, հաղթահարելով բոլոր դժվարությունները, կարողացել է լինել աշխարհի գրեթե բոլոր ծագումնաբերում, ուր պահպանվում են Հայոց եկեղեցական արարողակարգը ներկայացնող ձևագրերը, անձամբ ուսումնասիրել է երկրագնդի երեսին պահպանվող գրեթե բոլոր ճաշոցները, դրանով իսկ հայագետներին հնարավորություն է տվել ունենալ աշխարհով մեկ ցրված բոլոր ճաշոցների լիակատար ցանկը՝ անհրաժեշտ ձևագրագիտական վերլուծությանը:

Գրքի վերջաբանում²⁰ Շարլ Ռենուս մեկ անգամ ևս անդրադառնում է այն շրջադարձային պահին (XII դար), երբ արմատական փոփոխությունների ենթարկվեց Երուսաղեմյան Սահմանով ավանդված ճաշոցի ծրագիրը և հիշատակում կարևորագույն ձևագրախմբերը ներկայացնող մատյանների պահպանության վայրը և թվահամարները:

Հմտորեն կազմված գրքի ցանկերը²¹ մասնագետներին սպառնի տեղեկություններ և հաղորդում ուսումնասիրության մեջ հիշատակված աստվածաշնչային հղումների, օգտագործված ձևագրերի, աշխատանքում հղված միջնագրային և ժամանակակից հեղինակների, օգտագործված տեղանունների և մասնագիտական տերմինների մասին:

Մենում է հուսալ, որ ֆրանսիացի հայագետի ներկա աշխատանքը և հսկայական գիտական ժառանգությունը Հայաստանում կգտնեն իրենց ընթերցողին ու այդ գործին նվիրված շարունակողներին, և մեզանում ուսումնասիրություններ կգրվեն այն խնդիրների շուրջ, որոնց լուսաբանման է նվիրել իր ողջ գիտական գործունեությունը 65 տարին բոլորած, հսկայածավալ գիտելիքների տեր հետազոտողը: Մաղթենք նրան քաջառողջություն և նոր գիտական սխրանքներ:

Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆ

¹⁷ Նղիշտի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձևագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան. Երևան, 1957, էջ 39—41, 52, 67, 81, 152—153:

¹⁸ PO, t. 44, f. 4. p. 462—486.

¹⁹ Նույն տեղում, էջ 487—538:

²⁰ Նույն տեղում, էջ 538:

²¹ Նույն տեղում, էջ 539—549: